ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

11.11.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի քվեարկության արդյունքների մասին

Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ

Ս. թ. նոյեմբերի 11-ին, ժամը՝ 10:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2025 թվականի մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի հերթական նիստը: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը, նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Մարգարիտա Հովսեփյանը, Մարինե Սահինյանը, Լիլիթ Առաքելյանը, Հասմիկ Բարխուդարյանը, Արմինե Ասուլյանը և Անահիտ Շահինյանը:
Հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը հայտնեց, որ ըստ պլան-ժամանակացույցի ավարտվել է մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների քվեարկության փուլը: Նշեց, որ քվեարկության էր դրված 9 (ինը) նախագծեր, սակայն քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը հաղթահարել են 8 (ութ) նախագծեր: Բոլոր նախագծերն էլ բնակիչների կողմից ներկայացված են եղել բնակավայրերում խաղահրապարակներ կառուցելու և կարուսելների տեղադրման վերաբերյալ: Էդուարդ Մելիքսեթյանը՝ ըստ առաջարկված ծրագրերի, ներկայացրեց քվեարկության արդյունքում հավաքած ձայների քանակները.

1" Ագարակ բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 59 ձայն,
2. Բովաձոր բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 75 ձայն,
3. Լեջան բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 73 ձայն,
4. Լոռի Բերդ բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 61 ձայն,
5. Կողես բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 61 ձայն,
6. Յաղդան բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 75 ձայն,
7. Սվերդլով բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 71 ձայն,
8. Ոռուտ բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 62 ձայն,
9. Լոռի Բերդ բնակավայրի ֆուտբոլի դաշտի բարեկարգում – 1 ձայն:

Հանձնաժողովի անդամները, մանրամասն քննարկելուց հետո, եկան այն եզրակացության, որ նպատակահարմար է բոլոր ծրագրերը միավորել և իրականացնել <<Լոռի Բերդ համայնքի Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ բնակավայրերում խաղահրապարակների կառուցում և կարուսելների տեղադրում>> մեկ ծրագրի շրջանակում:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Մելիքսեթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Հովսեփյան

_____ Լ. Առաքելյան

_____ Հ. Բարխուդարյան

_____ Ա. Ասուլյան

_____ Ա. Շահինյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Սահինյան